

ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ «ՀԱԳՈՒՍՏ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏՈՒՄ

Լուսինե Ղամոյեան

Բառապաշարը լեզուի բաղադրիչներից ամենազգայունն է, որն անմիջապես արտացոլում է հասարակական կեանքում տեղի ունեցող իրաքանչիւր փոփոխութիւն: Տարբեր երկրների ու ժողովուրդների հետ ունենալով մշակութային, գիտական, տնտեսական, առեւտրական ու քաղաքական կապեր՝ հայոց լեզուն, բնականաբար, իր դարաւոր գոյութեան ընթացքում կրել է մեծ փոփոխութիւններ՝ համալրուելով նորանոր բառերով: Այն անընդհատ շփման մէջ է եղել շատ լեզուների հետ, ազդուել ու բազմաթիւ փոխառութիւններ է կատարել՝ միաժամանակ պահպանելով իր ինքնուրոյնութիւնը, քերականական կառուցուածքի եւ հիմնական բառային ֆոնդի ինքնատիպութիւնը:

Դրանց մի մասը տուեալ ժամանակահատուածի լեզուաընկալումների արդիւնքում տեղ է գտել ժամանակակից հայերէնի տարբեր շերտերում (գրական, բարբառային, ժողովրդախօսակցական): Ամրակայուելով հայերէնի բառապաշարում՝ բազմաթիւ կենցաղային բառեր, այդ թւում նաեւ «հագուստ» իմաստային դաշտի թւում նաեւ, դարձել են նրա անբաժանելի մասը եւ առ այսօր գործածական են:

Պատմութեան տրամաբանական պահանջով եւ լեզուի զարգացման անհրաժեշտութեան թելադրանքով մեզ համար հարգատեղ են դարձել տարբեր լեզուներից (պարսկերէնից, յունարէնից, արաբերէնից, ասորերէնից եւ այլն) վերցուած հագուստի բազմաթիւ անուանումներ, որոնց մի մասն անտիճանաբար դուրս է եկել գործածութիւնից, մի մասն այսօր գործածուած է թիւնից, մի մասն այսօր գործածուած է միայն բարբառներում, ժողովրդախօսակցական բառաշերտում, իսկ բազմաթիւ բա-

ռեր դեռեւս շարունակում են գոյութիւն ունենալ արդի հայերէնի գրական երկու տարբերակներում եւ շատ անգամ դրանց փոխառուած լինելը բնաւ չի զգացւում:

Այժմ անդրադառնալով «հագուստ» իմաստային դաշտում կատարուած փոխառութիւններին՝ որոշ դասակարգումներով:

Ա) Գրաբարեան շրջանում առնուած օտար բառեր հայերէնում:

Գրաբարեան շրջանում մեր լեզուի բառային կազմը համալրուել է բազմաթիւ փոխառութիւններով (այդ թւում նաեւ հագուստի անուանումներով): Դրանց մի մասն այժմ դուրս է եկել գործածութիւնից, դարձել հնաբանութիւն, կարելի է հանդիպել միայն բառարաններում¹ կամ զրքերում, մի մասը փոխանցուել է գրական հայերէնին, իսկ մի մասն էլ գործածուել է միայն բարբառներում:

1 Բերում բոլոր փոխառութիւնները համեմատել ենք հետեւեալ բառարաններով. Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հտ. Ա-Դ, Եր., 1971-1979 (այսուհետեւ՝ ՀԱԲ), Գ. Զահուկեան, Հայերէն ստուգաբանական բառարան (այսուհետեւ՝ ՆԱԲ), Եր., 2010, Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան (այսուհետեւ՝ ԺՀԼԲԲ), հհ. 1-4, Եր., 1969-1980, Էդ. Աղայեան, Արդի հայերէնի բացատրական բառարան (այսուհետեւ՝ ԱՀԲԲ), Եր., 1976, Ռ. Սաքապետոյեան, Արեւմտահայերէն-արեւելահայերէն ճոր բառարան (այսուհետեւ՝ ԱԱՆԲ), Եր., 2011, Գ. արքեպիսկոպոս Մերեճեան, Փ. Կ. Տօնիկեան եւ Ա. Տէր Խաչատուրեան, Հայոց լեզուի ճոր բառարան (այսուհետեւ՝ ՀԼՆԲ), հհ. 1-2, Պէյրութ, 1992, Ստ. Մախասեան, Հայերէն բացատրական բառարան (այսուհետեւ՝ ՀԲԲ), հհ. 1-4, Եր., 1944-1945, Հայոց լեզուի բարբառային բառարան (այսուհետեւ՝ ՀԼԲԲ), հհ. 1-7, Ե., 2001-2012, Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան (այսուհետեւ՝ ԳԲ), հտ. 1-2, Եր., 2000:

կայն վերարկու՝ նաւոճով, չերքէզի նման, որ հագնում են տղամարդիկ, սովորաբար հասարակ ժողովուրդը», պարեգօտ (*paragaud*, որից լատ. *paragaudis* եւն)² «վրայի զգեստ, պատմուճան, փարաջա», կոռտիկ (*kurta, kurtak* «կարճ զգեստ», նաեւ՝ լեհ. *kurta, kurt-ka*, ռուս. *курта, куртка*) եւ այլն) «աբեղայի վերարկու», սամոյր «սամոյրի մորթուց կարուած զգեստ՝ մուշտակ, սամուրենի» եւ այլն (տե՛ս ՀԲԲ),

• արաբերէնից՝ *աբա* (*aba*, <տաճկ.) «1. խիտ գործուած բրդէ կտոր, 2. աբայից կարուած տղամարդի վերնազգեստ, լայն թեւերով» (ՀԲԲ), կապայ (*qabā*) «պարեգօտ, առջեւը բաց զգեստ» (ՀԱԲ), այստեղից էլ՝ կապակ «կարճ պարեգօտ, մի տեսակ կապայ» եւ կապեկ (թթր. *kepek*) «կապայ, վերարկու» ձեւերը (ՀԱԲ), ՀԲԲ-ում՝ (թուրք.-թաթար. *kapak*) «կարճ կապայ, եկեղեցականի կարճ կապայ մինչեւ ծնկները» եւ այլն

Բարբառներում «վերնազգեստ» իմաստն ունեն գրաբարից եւ միջին հայերէնից անցած հետեւեալ փոխառութիւնները՝ ամիւն (*ասոր. āmelā, āmlōn* «վերարկու») «1. զգեստի մի տեսակ, 2. արզան, բամբակուն՝ մինչեւ ծնկներն հասնող զգեստ» (ՀԲԲ), Ակնում գործածուած է «բամբակած բաճկոն, որ հասնում է մինչեւ ծնկները» իմաստով, խիլայ/խլայ (*պրսկ. xil'ā*, արաբ. *xil'at* ձեւից) «խալաթ» (ՀԲԲ), Սեբաստիայում գործածուած է «թագաւորի պաշտօնական երկար, հագուստ, կապայ, պարեգօտ» իմաստով, Ալաշկերտում՝ «իբրեւ նուէր տրուած թանկագին զգեստ կամ շալ», Սուչաւայում՝ «սենեակի մէջ հագնելու բարակ եւ երկար զգեստ», մինթանայ (*պրսկ. nimten*, տաճկ.-ից՝ *mintan*) «կանանց երկայն զգեստ, վրայից հագնելու» (ՀԲԲ).

այս իմաստով գործածուած է Ղարաբաղի եւ Կարնոյ բարբառներում եւ այլն:

Արդի գրական հայերէնի բառային կազմում վերնազգեստ իմաստով հին փոխառութիւններից տեղ են գտել՝

• յունարէնից՝ փիլոն (*φελόνης, φελώνιου, φελόσιου* «կրկնոց, թիկնոց, վերարկու», «կրօնաւորի վերարկու» բառերից, «անթեւ վերարկու, կրկնոց» (ՀԱԲ)) «(եկեղ.) անթեւ երկար հագուստ, որ կոճկուած է միայն կրծքի վրայ եւ որը քահանան գցում է ուսերին եկեղեցում կամ այլուր կրօնական ծիսակատարութիւնների ժամանակ», քլամֆո (*χλαμύς, χλαμύσος* «պատմուճան» (ՀԱԲ) «(գրք.) թագաւորական կամ իշխանական ծիրանի պատմուճան», սքեմ (*σχημα, ձեւ տարազ*) «(եկեղ.) կրօնաւորի տարազ՝ հագուստ՝ զգեստ»,

• պարսկերէնից՝ մուշտակ (*muštak, mušta* (ՀԲԲ)) «1. կենդանիների մազածածկ մորթին, 2. այդպիսի մորթուց կարուած վերնազգեստ»,

• արաբերէնից՝ խալաթ (*xāl'āt* (>պ. *xel'at*) «նուիրատրուած թանկագին հագուստ» (ՀՍԲ)) «1. (պատմ.) թանկագին հագուստ, որ արեւելքում իշխողները տալիս էին իբրեւ նուէր, 2. վերնահագուստ, որ հագնում են տանը կամ արտադրութեան մէջ (կոճկուած է հետեւից կամ առջեւից)», կապայ (*qabā* «պարեգօտ, առջեւը բաց զգեստ բառից փոխառեալ (ՀԱԲ)), «1. կանանց երկար զգեստ, 2. տղամարդու զգեստ, 3. կրօնաւորների երկար զգեստ, որ հագնում են վերարկուի տակ, պարեգօտ» եւ այլն (տե՛ս ԺՀԼԲԲ, ԱՀԲԲ):

Արեւմտահայերէնում վերոնշեալ իմաստով փոխառութիւններից պահպանուել են պարեգօտ, կապայ, աղաբողոն, դեմքակ եւ այլ բառանուններ (տե՛ս ՀԼՆԲ):

Ներքնահագուստ: Գրաբարում այս իմաստով հանդիպել ենք՝

² Էդ. Աղայեանը գտնում է, որ *պարեգօտ* բառը հնագոյն հայկական բարդութիւն է, իսկ *gauda* եւ *paragayda* բառերը՝ իրանական փոխառութիւններ հայերէնից (տե՛ս Էդ. Աղայեան, *Բառաքնական եւ ստուգաբանական հետազոտութիւններ*, Ե., 1974, էջ 132-135):

•միջին պարսկերէնից՝ պարսեմակ «շա-պիկ» (ՀԱԲ) փոխառութիւնը:

Բարբառներում մեկ օրինակ հանդի-պել ենք՝

•թուրքերէնից՝ մանդիլ (*māndil*) «կրծ-կալ» (Ագուլիս)³, «կանացի գլխի թաշկի-նակ» (Թբիլիսի, Կարճեւան, Համշեն, Նոր Նախիջեւան (ՀԼԲԲ)) փոխառութիւնը:

Ներքնահագուստ իմաստն ունեցող հին փոխառութիւններից մի քանիսը բնա-կան ճանապարհով անցել են արդի գրա-կան հայերէնին, ինչպէս՝

•իրանական լեզուներից՝ վարտիք (**varti*, *var-* «ծածկել» արմատից (ՀՄԲ)) «1. տակի զգեստ, որ հագնում են անմիջապէս մարմնի վրայ՝ գոտկատեղից ցած, որով ծածկում են ազդերը, սրունքները: 2. ան-դրավարտիք», անդրավարտիք (*andar* «ներքին» եւ վարտիք բառերից (ՀԱԲ)) «1. փոխան, վարտիք, 2. շալուար, տաբատ», շապիկ (*šapik* «նուիրական շապիկ զրա-դաշտկանաց», *šabī* «գիշերային, գիշերազ-գեստ» (ՀԱԲ)), «տղամարդու մարմնի վերե-ւի մասին հագնելու զգեստ, որպէս սպիտա-կեղէնի մաս, ներքնաշապիկ, տակի շապիկ, 2. կանացի սպիտակեղէնի մաս՝ երկար, մին-չեւ ծնկների շրջանը հասնող տակի զգեստ, 3. տղամարդու մարմնի վերեւի մասի թե-թեւ վերնազգեստ, որ հագնում կոստիւմի տակից կամ (տաք եղանակներին) առանց կոստիւմի, վերնաշապիկ», ժողովրդա-խօսակցական լեզուում գործածւում է՝ թում-պան (*tunban*, մորթեղէն վարտիք) (ՀԲԲ), «(հնց.) 1. բամբկուն տաք շալուար, 2. ան-դրավարտիք, ոտաշոր», «1. (բրբ.) վարտիք, ոտաշոր, 2. վարտիքաձեւ անդրավարտիք՝ տաբաթ» բառանունը եւ այլն (տե՛ս ԺՀԼԲԲ, ԱՀԲԲ):

Ունաման: Գրաբարում այս նշանակու-թեամբ հանդիպում ենք՝

3 Տե՛ս Հ. Աճառեան, Հայոց լեզուի պատմություն, մաս 2, Եր., էջ 375:

•միջին պարսկերէնից՝ մուճակ (*mōčak*) «1. անորոշ տեսակի կօշիկ, կանացի կօշիկ, 2. (արեւմտ.) փապուճ» (ՀԲԲ),

•յունարէնից՝ սանդալ (*σάνδαλον* կամ իրանական աղբիւրից՝ *sandal* (ՀՄԲ)) «ա-ռանց կրունկի ոտնաման, հողաթափ, մու-ճակ, մոյկ» եւ այլն:

Բարբառներում հանդիպում ենք՝

•պարսկերէնից՝ չմուշկ⁴ (*čamšak* (ՀԱԲ)) «1. սուր քթով մաշիկ, սօլ (Ղարա-բաղ, Վան), 2. հողաթափ (Վան)»,

•թուրքերէնից՝ չորաբ (*čorab*) «գուլ-պա» (Սուեդիա)⁵, չորաբ/չորաբ 1. «տղա-մարդու բրդեայ գուլպա» (Ղարաբաղ, Հա-ւարիկ, Շամախի եւ այլուր)-չորաբ 2. «ա-մեն տեսակի կօշիկ» եւ այլն (տե՛ս ՀԼԲԲ):

Արդի գրական հայերէսում հին փոխա-ռութիւններից շարունակում են գործա-ծուել՝

•ասորերէնից՝ գուլպայ (*gorba*, մ.պ. *gōrāb* (ՀԲԲ)) «ոտքի թաթերն ու սրունք-ները ծածկող գործուած հագնելիք»,

•պարսկերէնից՝ մոյկ (*mōk*, կօշիկ (ՀԲԲ)) «մի տեսակ ոտնաման», կօշիկ (*kafšik*, *kafš* «կօշիկ» (ՀԱԲ)) «կաշուից կամ այլ նիւթերից կարուող ոտքին հագնելու յարմարանք, ոտնաման», սանդալ եւ այլն:

Մուճակ-ն այսօր գործածւում է նաեւ արեւմտահայերէնում (ԱԱՆԲ):

Կտորեղէն: Գրաբարում այս նշանա-կութեամբ հանդիպում ենք հետեւեալ փո-խառութիւնները՝

•ասորերէնից՝ շուշփայ/շուշպայ (*šūšep-ṣā* «գլխի ծածկոց. ծածկոյթ, քող» (ՀԱԲ)), բայց, որպէս առաջնային իմաստ, Աճա-ռեանը նշում է՝ «սկիհը մաքրելու կամ

4 «Չմուշկ» ասելով՝ այժմ առաջին հերթին հասկա-նում ենք «պողպատեայ շեղքաձև սահուկ, որ ամ-րացնում են կօշիկների տակ՝ սառույցի վրայ սա-հելու համար», ապա՝ «գու.» պայտած կրունկնե-րով սրաքիթ կօշիկ» բառը (ԱՀԲԲ, 1162):

5 Նոյն տեղը, էջ 382:

ծածկելու շոր, սրբոց մասունքների պատանք»,

•յունարէնից՝ ուրար (*ὥραριον*) «լայն ժապակենաձեւ կտոր, որ սարկաւագները կրում են ձախ ուսի վրայ եկեղեցում սպասաւորելիս»,

•ըստօրակ «մի տեսակ ոսկեհոռ թանկագին կտոր, դիպակ», շար⁶ «մետաքսից թափանցիկ ու նուրբ գործուածք, շղարշ, քող» եւ այլն:

Արդի գրական հայերէնում այս նշանակութեամբ պահպանուել են մի շարք փոխառութիւններ, ինչպէս՝

•ասորերէնից՝ խանձարուր (*azrūrā*, փաթաթան, խանձարուր (ՀԲԲ)) «1. նորածնին փաթաթելու շորերի ամբողջութիւնը. բարուր, 2. ընդհանրապէս փաթոյթ, 3. մահիճ» եւ այլն:

•յունարէնից՝ մետաքս (*μέταξα* կամ ասոր. *mitaksā* (ՀԲԲ)) «1. նիւթ, որ ամենանուրբ թելի նման արտադրում է շերամի որդը եւ որով բոժոժի ձեւով պատում է իրեն, հարսնեակ դառնում եւ ապա, թիթեռ դառնալիս, ծակում ու դուրս է գալիս, 2. շերամի արտադրած թելից պատրաստուած գործուածք, մետաքսից զգեստ, մետաքսեայ կտորից»,

•պարսկերէնից՝ դիպակ (*dēpāk*, *dēbā* (ՀԲԲ)) «1. մետաքսեայ ոսկեթել եւ արծաթաթել գործուածք՝ կտոր, 2. դիպակից կարած (հագուստ)», լաթ (*lat* «մաս, կտոր. 2. կտաւեղէն, կտորեղէն» (ՀԱԲ)) «1. կտոր, կերպաս, 2. զգեստ, հագուստ, 3. քուրջ, փոշեկաթ, ջնջոց, 4. անկողին, տեղաշոր, 5. կաշենման կտոր, որով երբեմն կազմում են գրքեր եւ այլն, 6. շորի ծուէն՝ պատառ, 7.

մաշուած՝ պատառոտուած ցնցոտի» եւ այլն (տե՛ս ԺՀԼԲԲ):

Կան փոխառութիւններ, որոնք հագուստի մասերի անուանումներ են, ինչպէս՝ գրաբարում այս իմաստով հանդիպում ենք՝

•իրանական լեզուներից՝ գրապան (*grivpān*, *girēbān* կամ *girēvān* «հագուստի կամ շապիկի վիզը՝ որտեղից գլուխն են անցկացնում. փողպատ» ձեւից (ՀԱԲ)) (գրապան ձեւն արձանագրուած է նաեւ արեւմտահայերէնում), վարշամակ (*vāršā-mak*) «թաշկինակ, սրբիչ, գլուխ կապելու շոր» (ՀԱԲ),

•արաբերէնից՝ զունար (*zunnār*) «փոքր՝ հասարակ գօտի» (ՀՍԲ) եւ այլն:

Բարբառներում հանդիպում ենք՝

•պարսկերէնից՝ կամար (*kamar*, գօտի) «մէջքը կապելու զարդարուն գօտի»,

•արաբերէնից՝ ջեք «գրպան» եւ այլն:

Այս փոխառութիւններից գրպանը եւ վարշամակը գործածուած են երկու գրական հայերէններում (վարշամակը արեւելահայերէնում արձանագրուած է հնց. նշումով):

Այսպիսով, մեր ձեռքի տակ եղած օրինակներից պարզ է դառնում, որ «հագուստ» իմաստային դաշտում փոխառուած բառանունների գերակշիռ մասը իրանական բառեր են, ինչը արտաքին գործօնի արգասիք է, տնտեսական-քաղաքական ազդեցութեան հետեւանք: Այդ փոխառութիւնները վկայուած են հիմնականում 5-րդ դարից (ինչպէս՝ անդրավարտիք, գրապան, դիպակ, դրօշակ, զանկապան, խոյր, կօշիկ, մոյկ, շար, պատմուճան, պարեհնակ, սաղաւարտ, սամոյր, սանդալ, սնդուս, վառ, վարշամակ, վարտի(ք), փաղան եւ այլն), հագուադէպ՝ 7-րդ դարից (ինչպէս՝ ըստօրակ), երբեմն էլ բառերի վկայութեան ստոյգ ժամանակաշրջանը հնարաւոր է որոշել (ինչպէս՝ մուճակ բառի), եւ յետոյ՝ «փոխառութիւնների վկա-

6 Այս բառանունը գրաբարում համանունական շարքի անդամ է. շար¹ «1. շարան, շարոց, 2. շարք, կարգ, դասաւորութիւն, 3. խօսքի շարակարգութիւն, շարունակութիւն, 4. մեծ քանակութիւն, բազմութիւն, խումբ, կոյտ» - շար² (ասոր.) «3600 տարուայ ժամանակաշրջան» - շար³ (պրսկ.)՝ վերոնշյալ իմաստով (տե՛ս ԳԲ):

յուլթեան ժամանակաշրջանը երբեք չպէտք է նոյնացնել փոխառման ժամանակի հետ: Վերջինիս որոշումը այնքան էլ հեշտ չէ՝ երբեմն նաեւ անհնարին է, քանի որ իրանական փոխառութիւնների գերակշիռ մասը վկայուած է 5-րդ դարում, ապա դրանց մասին կարող ենք ասել, որ վկայուած բառերի մեծ մասը փոխառուել է աւելի վաղ եւ գործածուել նախագրային շրջանից»⁷:

«Հագուստ» իմաստային դաշտում ոչ պակաս կշիռ ունեն նաեւ յունարէնից կատարուած փոխառութիւնները:

Բ) Նոր եւ նորագոյն փոխառութիւններ:

Եթէ վերոնշեալ փոխառուած բառանուններին աւելացնենք վրացերէնից (օրինակ՝ մաշիկ (ՀՄԲ)), կովկասեան այլ լեզուներից, Փոքր Ասիայի մի շարք լեզուներից, թիւրքերէնից, ապա՝ նոր ժամանակներում՝ ռուսերէնից ու եւրոպական լեզուներից (ֆրանսերէն, անգլերէն, իտալերէն) կատարած մեր փոխառութիւնները (ծակէտ, ժիլէտ, կոստիւմ, սապոգ, կոմքիմացիայ, բլուզ, տրուսիկ, կեպի, բերետ, բերետկապ, կորսէթ, ցիլիմոյր, կոֆտա, մամօժետ եւ այլն), այն ժամանակ կը հասկանանք, թէ որքան կարեւոր են դրանք հայոց լեզուի բառային կազմի մէջ: Օրինակ, խորհրդային շրջանում ռուսերէնը շատ մեծ ազդեցութիւն է ունեցել հայերէնի հարստացման գործում: Ներքին հիմնական պատճառը տուեալ հասկացութեանը, առարկային համապատասխանող բառի բացակայութիւնն է եղել: Հայ ժողովուրդը, գտնուելով զանազան կապերի ու փոխյարաբերութիւնների մէջ, անմիջաբար կամ միջնորդաւորուած ձեւով նոր հասկացութիւնների ու երեւոյթների հետ յաճախ վերցրել է նաեւ դրանց անուանումները: Հ. Աճառեանը գրում է. «Հայերէնը գիտէ միայն «գլխարկ ու գզակ. ռուսերէնից պիտի վերցնենք

նրա զանազան տեսակները (կարտուզ, կեպի, ցիլինդր, շապոյ, պանամա, մաշիշ, բերետկա)», կամ՝ «կօշիկների տեսակներից գիտենք «տրեխ, կօշիկ, կիսակօշիկ, ոտնաման եւն», իսկ ռուսերէնից հարկաւոր է վերցնել «սապոգ, սկարախոգ, բասանոշկի, տանկետկայ, տուֆլի, սապօփլի, լոդոշկա, սանդալ, սանդալետ եւն»»⁸:

Բազմաթիւ փոխառութիւններ երկար ժամանակ զրական լեզուի բառապաշարում չեն ունեցել իրենց համարժէք ազգային ձեւերը, մնացել են գործածութեան մէջ որպէս թոյլատրելի ձեւեր, բայց կան փոխառութիւններ էլ, որոնք լեզուի զարգացման տարբեր փուլերում աստիճանաբար վերածուել են օտարաբանութիւնների:

Նորագոյն փոխառութիւն ասելով՝ հասկանում ենք ռուսական ու եւրոպական լեզուներից նորագոյն ժամանակներում ընդունած նոր փոխառութիւնները, որոնք մտնում են առաջաւոր լեզուների ընդհանուր բառապաշարի մէջ եւ արտայայտում են մեծ մասամբ նորագոյն իրողութիւնները: Այդ բառերը յաճախ կոչւում են միջազգային կամ օտարազգի բառեր, քանի որ, ի տարբերութիւն հնագոյն ու հին դարերի փոխառութիւնների, նրանց փոխառելիքը դեռեւս գիտակցւում է:

Ներկայումս նոր հասկացութիւնների փոխառութեան ալեյայտ օրինակներ են՝ բոթաս, բանդանա, ջիմս, տրիկո, կարրի, լասիմա, բատինկա, ֆիգարո, մանթո (վերարկուի տեսակ), բոյֆոնդ (տաբատի տեսակ), լեզիմ, տոննշ, ֆոննշ եւ այլն, այդպէս նաեւ՝ ոտնամանի բազմաթիւ նորագոյն անուանումներ, ինչպէս՝ բոտֆորդ (երկարաճիտ կօշիկ, որ ձգւում է ազդրից էլ վեր), բոտիլիոն (աշնանային փակ կօշիկ՝ բարձր կրունկով), պիզալ (սուրսայր բարձրակրունկ կօշիկ), գլադիատոր (ամառային բո-

7 Լ. Յովհաննիսեան, Հայերէնի իրանական փոխառութիւնները, Եր., 1990, էջ 168-169:

8 Հ. Աճառեան, Հայոց լեզուի պատմութիւն, մաս 2-րդ, Եր., 2013, էջ 588-589:

կոտիկ), բալետկա (բաց մակերեսով կոշիկ), մոքասի (հնդկացիներին բնորոշ կոշիկ), կեդ (սպորտային կոշիկ), ուզգի (ձմեռային տաք եւ փափուկ կոշիկ), ալիփեթ (առանց թելերի եւ ամրակների փակ կոշիկ, որ աւելի շատ հոգաթափի է նման) եւ այլն, որոնց տեսակարար կշիռը օրէջօր շատ աւելի է մեծանում: Սրանք այն փոխառութիւններն են, որոնք չեն մերուել մեր բառապաշարին:

Այսօր էլ հայոց լեզուն իր բառապաշարը շարունակում է հարստացնել նորա-նոր փոխառութիւններով, որոնք իրենց կարեւորութեամբ ու անհրաժեշտութեամբ եղել եւ մնում են ոչ միայն բառապաշարի լրացման օժանդակ աղբիւր, այլեւ նպաստում են լեզուի բնական զարգացմանը:

Համառոտագրութիւններ

բւբ.-բուսաբանական

բրբ.-բարբառային

գվռ.-գաւառական

գրբ.-գրքային

եկեղ.-եկեղեցական

հնց.-հնացած

ЗАИМСТВОВАНИЯ В СМЫСЛОВОМ ПОЛЕ “ОДЕЖДА”

ЛУСИНЕ ГАМОЯН

Резюме

Лексика является наиболее чувствительным языковым компонентом, который прямым образом отражает любые изменения в социальной жизни. Имея культурные, научные, экономические, торговые и политические связи с разными странами и народами, словарный запас армянского языка естественным образом дополняется новыми словами и заимствованиями. В советский пе-

риод русский язык оказал большое влияние на обогащение армянского языка: многие бытовые слова, закрепленные в армянском словаре, стали его неотъемлемой частью. Среди этих слов значительную часть составляют наименования в смысловом поле “одежда”, некоторые из них постепенно выходили из употребления, некоторые сегодня используются только в диалектах, в демографическом словаре, а многие слова все еще существуют в двух литературных версиях современного армянского языка.

FOREIGN WORDS IN THE "CLOTHING" SEMANTIC FIELD

LUSINE GHAMOYAN

Summary

Vocabulary is the most sensitive language component, which immediately reflects every change in the social life. Having cultural, scientific, economic, commercial and political contacts with different countries and peoples it is natural that the vocabulary of Armenian language is constantly supplemented with new words and borrowings. During the Soviet Union period Russian language has had a great influence in the enrichment of Armenian vocabulary. A number of household words, being fixed in Armenian vocabulary, have become an integral part of it. Significant parts among them also are the sense field of words "clothing". Words of the "clothing" semantic field occupy a significant part among them, some of which are gradually out of use, some today are used only in dialects and many words still exist in the two literary versions of modern Armenian.